

Կամսար Գրիգորյան

ԱՐՏ. ԱՐԱՐԱՏՅԱՆԻ ԳԻՐՔԸ ՊՈԻՇԿԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Պուշկինի ձեռագրերում պահպանվել է ընթերցողաֆիկ տեղեկություններ պարունակող մի սևագիր թերթիկ: Գրված է այն, հավանաբար, 1836 թվականի սկզբներին: Այստեղ նշված են այն գրքերի վերնագրերը, որոնք դարձել են ողջ պոետի հատուկ ուշադրության առարկա և, որոնց մասին զուցե գրախոսականներ պետք է պատրաստվեին „Современник“ ամսագրի համար:

Պուշկինի այդ թերթիկի վրա կա հետևյալ համառոտ հիշատակումը՝ „О путеш. Арт. Ар.“. Առաջին հրապարակման ժամանակ այդ տողը բացված է այսպես՝ „О путешествии артиллериста Ар.“: Ծանոթագրություններում, առանց որևէ հիմնավորման, ասված է այն մասին, որ „Арт. Ар.“ պետք է կարդալ „Артиллериста И. Р.“, որ Պուշկինը սխալմամբ „И. Р.“ փոխարեն գրել է „Ар.“¹:

Պուշկինի ինքնագիրը թույլ չի տալիս տարբեր ընթերցումներ: Այնտեղ միանգամայն պարզ և որոշակի գրված է „Арт. Ар.“². Հարց է ծագում, թե ինչու համար հարկ է եղել նման քմահաճ ընթերցում: Ծանոթագրությունների հեղինակը ենթադրելով, որ թերթիկի վրա նշված են այն գրքերը, որոնց մասին գրախոսականներ պետք է լինեին „Современник“-ում (մի ենթադրություն, որ դեռ կարիք ունի ապացուցման), դիմել է ամսագրի 1836 թվականի համարներին և փնտրել տպագրված գրախոսականներում մի որևէ գիրք, որի վերնագիրը հիշեցներ պուշկինյան տողը՝ „О путеш. Арт. Ар.“: Չգտնելով ոչ մի ավելի հավանական վերնագիր, նա կանգ է առել հետևյալ գրքի վրա՝ „Походные записки артиллериста, с 1812 по 1816 год, артиллерии полковника И. Р.“ (Родожницкого), որի մասին „Современник“-ում տպագրվել է Գրգորի գրախոսականը³, Սակայն, այդ հիման վրա անհնարին է ապացուցել, որ Պուշկինը աչքի առաջ է ունեցել Ռադոժնիցկու գիրքը և սխալմամբ „И. Р.“ փոխարեն գրել է „Ар.“. ավելի հավանական չի լինի, եթե ընդունենք որ Պուշկինի խոսքերը վերաբերում են Արտ. Արարատյանի գրքին⁴, որը լույս է տեսել Դի. 1820-ական թվականների սկզբին բացի ողջերենից գերմաներեն և անգլերեն⁵, որը քաջ

¹ Неизданный Пушкин. Собр. А. Ф. Онегина, Труды Пушкинского Дома Российской Академии наук, ГИЗ, М.—Л., 1923, էջ 209. այդպես է տպագրված նաև հին ակադեմիական հրատարակությունում: Сочинение Пушкина, Л., 1929, հատոր IX, էջ 986—987, նույնը կրկնված է „Рукою Пушкина“ ժողովածուում (Несобранные и неопубликованные тексты. Подготовили к печати и комментировали М. А. Цевловский, Л. Б. Модзалевский, Т. Г. Зенгер.), М.—Л., 1935, էջ 284—285.

² Տես Պուշկինի ինքնագիրը: Գիտութ. ակադ. ողջ գրականության ինստիտուտ. Ձեռագրերի բաժին, Պուշկինյան ֆոնդ. 1. № 341:

³ „Современник“, 1836, № 1, էջ 304—305.

⁴ Жизнь Артемия Арапатского..., 2 части, СПб, в типогр. И. Иоаннесова, 1813.

⁵ Artemius von Wagarschapat am Gebirge Ararat. Halle, 1821. Memoirs of the life

ծանոթ է եղել Պուշկինի ժամանակակիցներին¹ և որի ողուսերեն հրատարակության օրինակը գտնվել է ողուս պոետի անձնական գրադարանում²։ Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Պուշկինի բիրլինգրաֆիկ ցանկի տողը «О путеш. Арт. Ар.» պետք է կարդալ «О путешествии Артемия Арапатского»։ Այդ գիրքը ոչ միայն եղել է Պուշկինի գրադարանում, այլև դարձել է ողուս պոետի հատուկ հետաքրքրության առարկան։

Aofrtemi of Wagarschapat, London, 1822, ավելի ուշ լույս են տեսել հայերեն հրատարակությունը (Թիֆլիս, 1882, թարգմ. Պ. Պոռշյանի), հատվածներ վրացերեն (თბილისი, 1885, № 9—11. թարգմ. Զ. Արջեվանիձեի)։

¹ Արարատյանի գիրքը հայտնի է եղել Գրիգորեղովին. տես՝ А. С. Грибоедов, Полн. собр. сочинений под ред. Н. К. Пиксанова. П., 1917, հատոր III, էջ 84.

² Библиотека Пушкина. Новые материалы. Исследование Л. Модзалевского, «Лит. наследство», М., 1934, № 16—18, էջ 996. Պուշկինի գրադարանի միայն մի մասն է ֆաջել։ Շատ գրքեր, որոնց թվում նաև Արարատյանի կյանքի պատմությունը դժբախտաբար, կորել են։